«Մարդամեջ[1]» Սոցիալական նորարարության ճամբար Հայաստան

Հայաստանում առաջին՝ «Մարդամեջ-Tech4People» սոցիալական նորարարության ճամբարն անցկացվեց 2011 թվականի նոյեմբերի 18-20-ը Ծաղկաձորում: Ճամբարն իրականացնում էին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ), ՄԱԿի զարգացման ծրագիրը (UNDP) և Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ ծրագիրը՝ Սոցիալական նորարարության ճամբար ՍՊԸ-ի հետ համագործակցությամբ:

ԵՀՀ-ն նախաձեռնել էր մարզային մասնակցության խթանման քարոզարշավ, որի շրջանակներում անցկացված 14 արտագնա ճանաչողական հանդիպումների ընթացքում ներգրավել էր ավելի քան 240 մարդ: Ակտիվ քարոզարշավի շնորհիվ ծրագրի սահմանված վերջնաժամկետին ստացվել էր 66 ծրագրային հայտ և ևս 66 մասնակցության հայտ:

Հիմնվելով նորարարության աստիճանի, տեխնոլոգիայի իրատեսականության և ծախսարդյունավետության մակարդակի վրա, հեղինակավոր ժյուրին 66 մասնակիցների կողմից ներկայացրած 70 գաղափարից ընտրել էր հետևյալ 6-ը՝ Ճամբարի ընթացքում մշակվելու համար.

- **«Անել թե չանել», Արամ Թովմասյան**: Նախընտրական խոստումների մոնիտորինգի հարթակ

[1] “Mardamej”-ը հայերեն “Մարդամեջ” բառի տառադարձումն է, որ բազմաթիվ իմաստներ ունի, այդ թվում նաև գյուղական վայրերում ֆորում-հավաքատեղի, սոցիալական քննարկումների հավաքատեղի և այլն: Հայաստանում առաջին սոցիալական նորարարության ճամբարը 2011 թվականին անցկացվել էր այս անվանմամբ:

- **«Պոպ կլինիկ», Անի Դավթյան**: Առաջնային բուժօգնության հաստատություններում ծառայությունների մատուցման և հիվանդների արձագանքների մոնիտորինգ
- **«Թաղ Ինֆո», Գայանե Միրզոյան**: Գերտեղայնացված համայնքային նորություններ
- **«Mytransport.am», Լիլիթ Մանուկյան**: Հանրային տրանսպորտի չվացուցակ
- **«ILike», Սամվել Մարտիրոսյան:** Սոցիալական ցանց «1000 ու մի մանրուք»
- **«Wish2Real», Ստեփան Սմբատյան:** Սոցիալական աջակցության կարիքը բարեգործական ռեսուրսներին կցող պլատֆորմ

Երկու օրվա աշխատանքների արդյունքում ի վերջո ընտրվեց «Mytransport» ծրագիրը՝ ստանալով 4,000 ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհային աջակցություն և UCom-ի կողմից երկու տարվա անվճար ինտերնետ և հոսթինգ: «ILike» ծրագիրը ստացավ հանդիսատեսի աջակցության մրցանակը:

ԵՀՀ-ն լրացուցիչ աջակցություն տրամադրեց ճամբարում մշակված չորս ծրագրերի, որոնք հաջողությամբ իրականացվում են: Գերտեղայնացված համայնքային նորությունների հարթակը սկսել է ծրագիրը ֆեյսբուքի էջով http://www.facebook.com/taghinfo և ավարտին է հասցնում վեբ կայքը: Wish2Real ծրագիրն արդեն հասանելի է http://wish2real.com/ հասցեում և ֆեյսբուքյան էջում http://www.facebook.com/wish2real: Պոպ կլինիկը գործում է http://www.popclinic.org/ հասցեում և ֆեյսբուքի էջում http://www.facebook.com/pages/Pop-Clinic/197515393661736: